

կեանքում ներմուծելու ձևականութիւն, շուայութիւն և անբարոյականութիւն:

Մեր երիտասարդութեան հետ զուգընթացաբար մեր հասարակութեան միջից դուրս են՝ գալիս գրեթէ նոյն չափով բարձրագոյն կրթութիւն ստացող հայ աղջիկները:— Մի հոսանք է որ սկսուել է աղջիկների դէպի Ռուսաստանի ու արտասահմանի կանանց բարձրագոյն կուրսերը: Մէկը գնում է, մի տարի մնում՝ գալիս է, երկրորդը գնում մի 6 ամիս և վերադառնում լսկ իւրացնելով կրթական վերջին մօդաները. վերջապէս մի չորրորդը աւարտում ու այսպէս շարունակուած անընդհատ Ձևականութիւնը, ոչխարային կոյր հեռուողութիւնը այստեղ էլ կուրացրել է բուն գիտակցութեան լօգիկան, որովհետեւ հարեւանի, բարեկամի աղջիկը գնացել է, դրա համար ինքն էլ յետ չպէտք է ընկնի: Գնում են առանց հասկացողութիւն ունենալու թէ դէպի ուր են ձգտում իրանք. արդեօք հագնելու, տեսնելու թէ սովորելու բան է նրանց ցանկացածը, այդ նրա ըմբռնելու բանը չէ, միայն թէ իրականացրած լինի իւր կամքը: Արգեօ՞ք ինչ են արել դժբա մեր հայ ընտանիքի նիստ ու կացի մէջ, բարեխաւել, բարձրացրել են բազմաչարչար հայ կնոջ դրութիւնը, վերադառնալով ընտանիք այդ ուսում առածները, փոխել, լուսաւորել են մեր նախապաշարուած հայ ճանիների միտքն ու աշխարհայեցողութիւնը. հալածել են ընտանիքներից մեր մայրիկների շրթունքներից այնքան զգուսիլ պատմական բամբասանիքութիւնը...

Ինչպէս մեր կրթուած, ուսումնական երիտասարդները, նոյնպէս և մեր կրթուած ուսումնական փափկասունները, պոռոտախօս են, մօդայական և փքուն ֆուզներով յոխորտացող. ասող, քարոզող զանազան վեհ ու բարձր գաղափարների, բայց իրօք ոչ ջատագով, ոչ խրախուսող և ոչ իրադրծող, և որովհետեւ խօսքի, քարոզի հետ չկայ կենդանի օրինակ ու գործ. հէնց՝ դրա համար էլ մեզանում իւրաքանչիւր մի գործ դեռ չսկսուած մեռնում է հէնց նոյն իսկ սկսողների ձեռքերով:

Կան, այո՛, կեանքի մէջ ցաւեր, վերաւոր երևոյթներ, որոնց մասին որքան ուզում ես, խօսիլ, գրիլ, սակայն նրանք մնում են միշտ թարմ, որովհետեւ կեանքը չի բուժում, հոսանքում արմատախիլ չի անում այդ ախտաւոր վէրքերը:

Նրեան

ԳԻՏՈՂ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրութեանս մէջ ստացուած յայտարարութիւններից տեղեկանում ենք, որ առաջիկայ յունուարից կսկսուեն հրատարակուել հետեւեալ հայերէն ամսագիրներ և հրատարակութիւնները.

1. Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքում Սմատ Բիւրա-
տի և Նրուանդ Սրմաքէշիսանիանի խմբագրութեամբ «Միսուան»
ամսաթերթը, բաղկացած 32 էջերից և 5 ռուբլի բաժնէգնով:

2. Պարիզ քաղաքում «Կոռնիկ» եռամսեայ գեղարուես-
տական հանդէսը Կ. Գալֆայեանի խմբագրութեամբ: Հանդէսը
հրատարակուելու է հայերէն և ֆրանսերէն լեզուներով: Բաժն.
4 ռուբլի:

3. Շուէյցարիայի Լոզան քաղաքում տարւոյս օգոստոսից
հրատարակուում է «Գիտութիւն» պատկերազարդ ամսաթերթը
Մ. Նալբանդեանի խմբագրութեամբ: Բաժն. 5 ռուբլի:

4. Աղէքսանդրիայում Կ. Գալֆայեանի խմբագրութեամբ
«Առողջապահութիւն» գիտական, բժշկական ու փորձնա-
հոգեբանական եռամսեայ հանդէսը: (Բաժն. 5 ռ.)

5. Աղէքսանդրիայում դկտ. Յ. Փաշաեանի ձեռքով «ըն-
դարձակ դպրոցական առողջապահութիւն» ուսուցիչների, աշա-
կերտների և ծնողների համար: Գինն 2 ռուբլի:

ՌՈՒՍ «ՆՈՎՈՅԵ ՄԻՍԶՐԵՆԻԷ», ԼՐԱԳԻՐԸ

«Նովոյե աբազրենիէ» ամսնորեայ լրագիրը, որ 14 տա-
րուց ի վեր հրատարակուում էր եղբայրներ իշխ. Թումանեան-
ների ձեռքով, այս դեկտեմբեր ամսից անցաւ «Трудъ. ра-
БОТЪ»-ի նախկին խմբագիր պ. Ք. Բալանթարեանի ձեռքը:
Նոր. Թումանեանների ձեռքով խմբագրուած «НОВ. ОБ.» լրա-
գիրը բռնած ունէր Կովկասի ռուս մամուլի մէջ իւր ուրոյն
տեղը մի կողմից իւր լուրջ ուղղութեամբ ընդհանուր հասա-
րակական հարցերի վերաբերութեամբ և միւս կողմից իւրով.
սանն մաքառելով օտարազգի հայատեացների դէմ և առողջ
գաղափարներ տարածելով այդ խեղճ ազգի նկատմամբ ռուս
հասարակութեան մէջ:

Նոր. Թումանեանների գրական ասպարիզից հեռանալու
առթիւ տեղական մամուլի ներկայացուցիչները յարգել են նո-
ցա նոյեմբերի 27-ին մի ընթրիքով: Ընթրիքին մասնակցել են
տեղական բոլոր ազգերի մամուլի ներկայացուցիչները և բա-
ւական ստուար բազմութիւն համակրողների: Ստացուել են
բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ. իսկ
ընթրիքի վերջը հանդիսին ներկայ եղող հասարակութեան մէջ
միտք է յղացուել հանգանակութիւն կատարել մամուլի արա-
գայ ֆօնդի համար:

Մենք մեր ձայնը միացնելով բոլոր յիշեալ յարգողների և
համակրողների շնորհաւորութեանց հետ, կարող ենք միայն
ցաւել, որ ընթրիքի կարգադրիչ մասնաժողովը զլացել էր հրա-
ւէր ուղարկել նաև «Լուսնայ» խմբագրութեան, որով մենք
զրկուած եղանք մեր ջերմ յարգանքները դէպի այդ գաղափա-
րական գործիչները անձամբ մատուցանել նոցա: